ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Մարշալ Լենդ ՍՊԸ-ն ՀՀԱՆՇՕԾ-ԷԱՃԱՊՁԲ-2026/20 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
11	GOFORM	DONGYING ZHANGAO RUBBER CO LTD GOFORM	Ձմեռային օդաճնշական անվադողերը նախատեսված են ավտոմեքենաների անվտանգ շահագործման համար ձմեռային եղանակային պայմաններում (ցածր ջերմաստիճան, ձյուն, սառույց, թաց և սառած ճանապարհածածկ)։Անվադողը պետք է ունենա վավեր համապատասխանության սերտիֆիկատ, որը հաստատում է դրա համապատասխանությունը գործող նորմատիվ պահանջներին։ Անվադողը պետք է լիովին համապատասխանի ՀՀ կառավարության 2004 թվականի նոյեմբերի 11-ի N 1558 որոշմամբ հաստատված «Օդաճնշական անվադողերի տեխնիկական կանոնակարգի» պահանջներին։Արտադրության տարեթիվը պետք է լինի ոչ շուտ, քան 2026 թվականի առաջին եռամսյակը։ Անվադողը պետք է լինի նոր, չօգտագործված, առանց որևէ վերանորոգման, վերամշակման կամ մեխանիկական վնասվածքների հետքերի։Ձմեռային անվադողը պետք է ունենա ձմեռային շահագործման համար նախատեսված հատուկ ռելիեֆային նախշ (պրոտեկտոր), որը ապահովում է բարձր

			կպչողականություն ձյան, սառույցի և թաց ճանապարհածածկի վրա: Ռետինային խառնուրդը պետք է ապահովի էլաստիկություն ցածր ջերմաստիճաններում, պահպանելով անվադողի շահագործման արդյունավետությունը:Անվադողի շերտային կառուցվածքը պետք է ապահովի բարձր դիմացկունություն, մաշակայունություն և ծանրաբեռնվածության նկատմամբ կայունություն, ինչպես նաև անվտանգ երթևեկություն: Անվադողը պետք է ապահովի կայունություն, լավ կառավարելիություն և կարճ արգելակման ճանապարհ ինչպես չոր, այնպես էլ թաց և սառցակալած ճանապարհային պայմաններում:Երաշխիքային ժամկետ 12 ամիս ստացման օրվանից:Բեռանաթափում և տեղափոխում պահեստ Մատակարարը պարտավորվում է ապրանքի մատակարարումն իրականացնել Պատվիրատուի կողմից նշված հասցեով և սեփական ուժերով ու միջոցներով ապահովել ապրանքի բեռանաթափումը, տեղափոխումը և տեղաբաշխումը (դասավորումը) Պատվիրատուի կողմից սահմանված համապատասխան պահեստում/պահեստային տարածքում: Ապրանքի հանձնումը չի համարվում կատարված միայն մուտքի մոտ կամ բակի տարածքում բեռնաթափելու դեպքում. ապրանքը պետք է հանձնվի պահեստում՝ ամբողջ ծավալով, առանց լրացուցիչ ծախսերի Պատվիրատուի համար:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Մարշալ Լենդ ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀԱՆՇՕԾ-ԷԱՃԱՊՁԲ-2026/20 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	товарный знак	наименование производителя	технические характеристики
11			